

նութիւնները: Իսկ Գերմանիայից անցնելու ժամանակ այս՝ դեռ եւս «բարբարոս երկիրներում նա Յիսուս Գրիստոսի օրէնքն է քարոզել»³:

Այսպէս իր բոլոր անցած եւրոպական երկիրներում քարոզելով եւ խրատ կարգաւորով, 1011ին գալիս է Բելգիայի Գէնտ կամ Գան (Gand) քաղաքն, ուր հիւրընկալուած է Ս. Բաւոն կոչուած արքայութեան (abbaye) մէջ:

Հետեւեալ տարին մի սաստիկ համաճարակ է սկսուած, որ աւերում է եւ մեծ դոճեր տանում: Էսկո (Escout) դէտի ամբողջ եղբւրքի բնակչութիւնը վարակուել էր ժանտախտով: Մակար եպիսկոպոս անձնուէր կերպով խնամում է ժանտախտից բռնուած ամենամանր հիւանդներին: Ամէնքը հիացած են նրա զուտ քրիստոնէական բոլորանուէր կարեկցութեան վրայ: Իսկ Մակար ասում է. «Ես իմ անձս պիտի չխնայեմ, որովհետեւ ժանտախտը պիտի դադարի միայն այն ժամանակ երբ ես էլ դոճ գնամ»: Մակար վարակուած է եւ դոճուում իր անձնուիրութեան: Ինչպէս որ նա գուշակել էր, նա իր մաքուր հոգին աւանդում է թէ չէ, ժանտախտն էլ դադարում է: Գոնէ այսպէս են վկայում նրա ժամանակակիցները:

Մակարի զերեզմանը դառնում է ուխտատեղի, ուր այնուհետեւ խումբ խումբ հիւանդներ են գալիս նրա բարեխօսութիւնն աղերսելու եւ շատերը բժշկուում են: Լուրը տարածուում է. Մակարի անունը հռչակուում է ամէն տեղ: Հոռոժ քննութիւն է նշանակուում, որ տարիներ է տեւում: Երկար ձեւակերպութիւններից յետոյ Հոռոժից բարձրագոյն Ատենանը ընդունում է Անտիոքի հայ եպիսկոպոս Մակարի հրաշագործ լինելը, ըստ պատշաճի եկեղեցական օրէնքով սրբացնում է նրան եւ արժանացնում է խորանի վրայ պատուելու պատուին: Այս վճռին վրայ, 1067ին նրա մարմինը հանում են անշուք գերեզմանից եւ շքեղ հանգէսով, մեծ յուզարկաւորութեամբ տեղափոխում են նրա հռչակին վայել տեղ: Այս յուզարկաւորութեան մասնակցել են ոչ միայն Բելգիայի բոլոր եկեղեցական եւ աշխարհական իշխանաւորները, այլ նոյն ինքն Գաղղիոյ թագաւորը, Փիլիպպոս Ա. անձամբ:

Հայ սուրբի նշխարքը սիրուում է ամէն կողմ. նրա անունով խորաններ են կանգնում եկեղեցիներում. բարեպաշտ Եւրոպացիներ նրա պատուին կրօնական եղբայրակցութիւններ են հիմնում: Հայ Սուրբ Մակարը մտած է

լատինական Տօնացոյցի մէջ եւ մինչեւ այսօր տօնուում է ամէն տարի Ապրիլ 10ին, Լատիններէն՝ S. Macarius իսկ գաղղ. Saint Macaire կոչումով:

Այս բոլորը՝ պատմուած է Բրիւքսէլի հանրաձայնօթ Բոլլանդիստից (Bollandistes S. J.) հրատարակած համալուար լատիներէն Վարք Սրբոցի մէջ⁴, որոնց վրայ աւելի մանրամասն պիտի խօսիմ յետոյ:

Այն արքայութիւնը կամ վանքը, ուր ապրել եւ մեռել է Մակար, այժմ կործանուած է տասը դար հնութեան հետեւանքով բայց նրա յաճախած եկեղեցին, վերանորոգուած, այժմ էլ Ֆլանդրայի Գան քաղաքի մայր եկեղեցին է:

Թէ ինչպիսի յարգանք են տածում Բելգիացի պատմիչները հայ սուրբի մասին, երեւում է այն տիպոսներից, որ տալիս է նրան ժամանակակից մի կենսագրող. «Ոչ ոսկի Արարիոյ, այլ Ծաղիկ Հայաստանի, սուգ Ասորիքի (որովհետեւ թողել, հեռացել էր այնտեղից), փառք Ֆլանդրայի եւ զարդ Գանդիցիներին» եւ այլն⁵:

Ս. Մակար մինչեւ հիմայ էլ յարդուած է Բելգիայում իրրեւ ժամուայտի դէմ պաշտպան սուրբ:

Հետաքրքրուողները կարող են աւելի մանրամասն տեղեկութիւններ գտնել բացի յիշեալ Acta Sanctorumից դիմելով նաեւ նոյն Բոլլանդիստների Bibliotheca Hagiographica Latina, Bruxelles 1900—1901, էջ 757, ուր Macarius ep. Antiochiae Armeniae խորագրի տակ նշանակուած են նրա երեք պատմիչների գործերը:

Բելգիա ոտք կոխող այս առաջին հայի մահուանից եւ փառաւորումից յետոյ, նոյն ժ.Ս. դարի վերջում, Բելգիացի իշխաններ եւ կամաւորներ մեծ բազմութեամբ, կարծես թէ փոխ այցելութեան են գնացել Մակարի երկիրն եւ այնտեղ հաղարներով իրենց կեանքն են դոճել, յանուն նոյն քրիստոնէական գաղափարի, Dieu le veut («Աստուած այսպէս կ'ուզէ») բացականչելով, ինչպէս պիտի տեսնենք յետագայ Գլխում:

(Շարունակելի:) ՍՍՐՈՒՍԱՆ

⁴ Acta Sanctorum, t. I. Aprilis (1675), էջ 873—896:

⁵ Այս լատիներէն բնագիրը. «Non aurum Arabiae, sed Armeniae flos et Syriae luctus, gloria Flandriae et Gandensium decus, modo regnans in caelis եւ այլն: Անդ, էջ 891:

³ Michaud, Histoire des Croisades. Paris 1854. Eclaircissements, էջ 436—437:

ՍԻՄԵՈՆ ԳՊՐԻ ԼԵՀԱՅԻՈՅ

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ Ի ԼՎՈՎԵ Ի Կ. ՊՈԼԻՍ, Ի ՀՌՈՍ, Ի ՄՈՒՇ ԵՒ ՅԵՐՈՒՍԱԿԼՄ ՅԱՄՍՆ 1608—1619:

(Շարունակութիւն:)

9. ՈՒԵՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ Ի ՄՈՒՇ

ՀԱՆԳԵՍԻ ԶԱՄԱՐՁՄԱՆ Ի ՎԵՆԵՏԻԿ

Եւ իրրեւ լցաւ Թ. ամիս, գտեալ ընկերք եւ նաւակ մի պատրաստական՝ յիշելով զանուն Աստուծոյ, կոչելով յօղնութիւն սուրբ զառաքեալն Պետրոս եւ զՊօղոս մտեալ ի ներս՝ հասաք ի մեծն Վանատիք, օրն Համբարձման, որ կոչենց էնց ա՛. զի օրն այն մեծ է անդ եւ յոլով տօնանմայ եւ շատիւ առնեն, որպէս ի Մսրք սուլ զխաւսմին. զի Սպանիոս մօյտանի նման զարդարեն զամէն փողոցներն. եւ Սա Մարքոյն առջեւ մօյտան սաֆի կանաչ ծառ ու ճուղ եւ տերեւոց զանազան յօրինուած եւ շէնք եւ վերեւն խումաշի, չուխայք եւ աթլասք:

Եւ այն օր Դուքսն պիտոր վիճակ ելնէ ծովու վրայ. վասն որոյ զարդարեն վաթսուն զատրոյ՝ մի քան դմի պատվական եւ գնոջ, իսկ Տուքինն ազնւազոյն քան զամէնին. դրուր կէմին զուտ վարդով ձեփած ոսկով, որ շափաֆէն չէր կարել մարդ շատ հայել ի նայ: Եւ մտեալ նախ ես ի ներս՝ տեսաք զաթոն ուր նստելոց էր եւ վերեւն խուզան եւ Ֆէնէրն եւ այլն, յոյժ բազմածախ եւ անդուտ. զոր եւ Ո ս կ ի կ է մ ի կոչէին: Եւ իրրեւ ժամ եղեւ՝ մտեալ ի ներս ելին ի ծովն. եւ անդ էր տեսանել զձայն փողոց եւ քնարից, տաւուլ զուռնայից, թօփ ու թֆանքից եւ պայրախնուն: Եւ հասեալ ի տեղին, ուր ատաթն է, անդ ընկեալ Դուքսն մատանի մի ախնով, որ ժՌ զուռուչ արժէ. սպա ուրախութեամբ եւ մեծ շէնքով դառնան ի քաղաքն:

Հարցոյ զՎարդապետն². եւ ասին. Վաղ դնաց, զի աստ օր մի եկաց:

Եւ կացի անդ երկու շաբաթ, մինչեւ դնան կէմիք. բայց կային լաւ մարդիկ Հայք, որ խրատ տվին ինձ թէ Գնէ աստ իրք մի, որ

¹¹ ճուխ եւ տէրեւոց: — ¹² օրինուած: վերեւն: — ³⁴ մարդիք:

¹ Ascensione, 1612, Մայիս 31: ² Այսինքն՝ հարցուցի Չաքարիա վարդապետի մասին:

տեղ տանիս՝ խարճա կ'ելնէ: Եւ ես ունէի գրամ սակաւ մի, ետու ի ձեռս նոցա. եւ նոքա գնեցին ինձ խուրտա Ուռուճէլու խարճ: Չի նոքա զիտեն ամենայն աշխարհի խարճն. եւ ունին այնպէս՝ ինչ տեղաց որ ուղեն. զի Ուռուճէլուն ցած է, Անատոլուն այլ ցած. բայց Ստամպոլոյն ծանր եւ գնոջ, թէ՛ ջուխան, թէ՛ քամխան, թէ՛ այլն:

ՈՂԲ Ի ՄԱՀՆ ԵՐԻՑԱԳՈՅՆ ԻՐՈՋՆ ՃՈՒՀԱՐԻ

Եւ մինչ ես ի ճանապարհի պատրաստութեան էի, եկն այր մի Վանեցի՝ Չիրախ անուն, իմ ծանօթ եւ սիրելի: Սա երբ ինձ գուժ եւ բօթ ի Չամոսոյու քաղքէն, թէ Մեծ քոյրք մեռաւ. ես թաղեալ՝ եկի աստ: Չայս իմ լուեալ՝ խոզկեցաւ հոգի իմ, զալարեցան աղիք իմ, շփոթեցաւ անձն իմ, թարշամեցաւ գոյն երեսաց, մթացան աչք իմ, շիւարեցաւ միաքս, բեկաւ մէջք իմ եւ անկայ երկիր եւ լալով ասեմ. վա՛յ ինձ, քաղցրելի քոյր իմ. եղո՛ւկ թշուառականիս. ո՛հ մեծի աղէտիս եւ աւա՛ղ տարակուսանացս: Ո՛վ բարերար իմ, ո՛վ երախտաւոր իմ, ո՛վ սիրելեցեալք իմ, ո՛վ աշխատաւոր իմ, ո՛վ քոյր իմ եւ մայր. քանզի զմայրս սակաւ գիտացի, բայց զքեզ երկար ի կենցաղս իմ: Դու էիր միխթար իմ, դու սիրփիչ, դու ցաւոցս իմոց փարատիչ, դու էիր ուրախութիւն իմ. արդ զի՞նչ գործեցից կամ առ ո՛վ զիմեցից: Ով զթած եւ կորովամիտ քոյր իմ, ընդէ՞ր սակաւ մի ոչ լոնցեր, սուղ մի ոչ յամեցեր, է՞ր շի լոնցեր մինչ ես գայի. է՞ր չեղէ արժանի տեսեանքս, քանզի դու էիր միշտ ի սենեակ սրտիս, դու էիր ի միտս իմ, հանապաղ յիշէի զքո գութն, սէրն, խնամքն: Արդ հասաւ յոյս իմ, լքաւ կեանք իմ, զի ես կորուսի զտենչայի սկն իմ, զանգին մարգարիտն իմ. վա՛յ ի վրայ վայի, եւ հազար եղուկ անձինս եղկելի, որ հասարթ, կարօտ եւ վախաղ մնացի ես քո բարի եւ քաղցր տեսի, զի շտապէի առ քեզ զալ, եւ դու յինէն փախար եւ առ Քրիստոս փոխեցար:

Եւ այնպիսի ոգով եւ տրամութեամբ եւ հաստատանօք նստեալ ի նաւ՝ անցաք մեծ կղզի մի ԿՐԻՏԷՍ անուն, մեծ քան զՄիտիլի: Եւ անտի բերթ մի ԲԵՌՅՈՍ³, զարմանալի յինքնարոյս լեռնէ Աստուծոյ խուտրաթէն զուգած, յոյժ անառիկ եւ ամուր որպէս կամար,

⁴⁹ յոգի: — ⁵⁰ յաղիք: շրթեցաւ: — ⁶⁶ էր: — ⁷⁷ հաստատանօք: — ⁸¹ յամուր:

³ Բոնֆու:

Եւ վերեւն եարոյք շինած. յորմէ հոռոյք ջուր շտապմամբ, որ այլ չկայ նման նմա:

Եւ անտի եկաք ի ԶԱՆԹԱՅ կղզին. եւ ապա ի մեծ կղզին ԶԱՏՐԱՅ, որ ասին թէ 346 զեղ կայ ի նմայ. եւ վասն ընդդէմ գոլոյ հողմոյ՝ կացաք անդ ժիօ օր: Եւ կայր մեծ եկեղեցի մի վիմաշէն նման Այասօֆու. եւ ասին թէ սուրբն Հեղինէ յորժամ դարձաւ սուրբ Խաչափայտիւ, վասն խոռվութեան եւ ալէկոծութեան աստ ել զօրօքն եւ ետ շինել զայս եկեղեցիս մէկ վարպետի, զոր յետոյ որդի նորա Կոստանդիանոս շինեց ի Ստամբուլ: Եւ էին կղզիքս այս ամէնն Վանատիկու. բայց Հոռոմք էին: Եւ թէ հաշվես Վէնէտիկու մինչ Ստամբուլ եւ անտի մինչ Տրապիզոն, որչափ աստ կայ, ամէնն հոռոմ է. եւ ձերմակ ծովու, Սեւ ծովու երկու կողմանց եւ լուքն սաֆի հոռոմ են: Բայց այս տեղաց Հոռոմնին խիստ չար եւ զալում էին, Հայոց մեծ թշնամի. երբ զմեզ տեսնէին՝ թքանէին եւ ի շքիլ՝ կոչէին, որ է շուն եւ հերձուածող. եւ թէ ոք նոցա ամանէ հաց ուտէր կամ բմպէր, իսկոյն կոտորատէին թէ եւ գնոջ լինէր:

ԱՂԵՐՍԻ ՅՈՒՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ

Եւ չէ դարմանք, զի (Հոռոմք) նախնեաց թշնամիք են Հայոց. թէ ոք կամի՝ թող կարգայ զՄիխայլ զերբն⁵, Թօմայ պատմագիրն եւ այլն, թէ զինչ չարիք անցուցել են ի գլուխս նախնեաց մերոց. եւ որպէս բարձին զթաղաւորութիւնս Հայոց մինչեւ Յոհան 1088նցին, որ զնաց առ Օմար հօր արքայն Պարսից⁶ եւ նորին էմիրնովք եւ հրամանաւ վարեց արտաքսեց զամենայն Հոռոմս եւ սուրկուն արարեալ ելից ծովն Պոնտոսի եւ զամենայն 110 ծովեկերեսոյս: Զոր եւ նախ սուրբն Սահակ հայրապետն մեր զնաց առ Մահմատ եւ անձնեաց զմեզ նմայ, թափելով զՀայք ժանտ եւ վատ նենկաժող արդէն Յունաց, որ են հին թշնամիք մեր: Զոր եւ զայս ընթերցայ ի պատմագիրս, զի որչափ հոռոմ տիրէր՝ ոչ եմուտ Ստամբուլ հայ, ոչ թէ բնակիլ այլ եւ պէղիբկան չթողուին. եւ յորժամ Տաճիկքն ատին, ապա հրաւիրօք եւ խնդիրքով ի բազում գաւառաց բերին զՀայք Ստամբուլ, որ 120 պէս եւ ի Լեհ եւ այլ տեղիս: Նաեւ մեծ եւ

83 շտապմամբ: — 97 ճէրմակ: — 115 ծովեկերայս: — 119 ընթերցայ: — 122 տաճիկ:

⁴ Σαύλαξ? ⁵ Միքայէլ Ասորի, ժամանակագրութիւն: ⁶ Այսինքն՝ ամիրայն Արարացոց:

փառաւոր զեկեղեցիս ատին Տաճիկք ի Հոռոմոց եւ ետուն Հայոց. փա՛ռք Աստուծոյ: Ոչ զիտեմ թէ ինչ շնորհաց է այս, զի ամենայն ազգ սիրեն զմեզ՝ հաւատացեալք եւ անհաւատք, բայց հոռոմէն. թէպէտ ազգս մեր անմիարան եւ սէր չունին՝ որպէս եւ անունն իսկ յայտնէ:

ԿՕԶԱԼ ՀԻՍԱՐ

Եւ անտի ելեալ անցանելով բազում կղզիս եւ լերինք եւ մշքու ստանին — ուստի մարմաղիայ, մշկէթ եւ այլ ազնիւ զինիք կ'ենեն — հասաք ի ՍԱՔԸՁ քաղաք. բայց ներս ոչ մտաք, ուստի ելանէ ազնիւ աթլաղ, քամխայ եւ թօռ խուշախք եւ սախոն որ է մազտաքէ, սպիտակ եւ ազնիւն անտի ելնէ: Եւ կրկին ի ԶՄԻՌ քաղաք. անդ ծախեցի սակաւ մի քուր: Անտի անցայ ԹԻՐԱՅ. եւ անտ եւս նաղտեցի զէսպապս. եւ կամեցայ ԿՕԶԱԼ-ՀԻՍԱՐ գնալ. զինչ դրամ ունէի եւ թօժվանի եւ թէսպէհնի եւ ճամատանով դրեանքս թողի մօտ տօլլաթլոր մի ի խանն՝ Կիրակոս անուն, որ էր ընչաւէտ. եւ ես չուեցի: Եւ Կօղալ-Հիսարու հաւան խիստ դէշ էր, առաւ 15 զիս. եւ երրորդուն օրն հիւանդացայ հիւանդութիւն մեծ եւ անկայ իրրեւ մեռեալ: Երկու շաբաթ զիս թէ ուէթմէն նեղեց. ապա սակաւ մի գլուխ խելք եկաւ, տեսի օտառ թաղնած էր եւ բան մի չէր թողած. բայց կայր պառաւ մի երկիւղած, որ Աստուծոյ սիրուն համար ինձի պէտ կ'անէր. նա ասաց ինձ թէ Պէյթաթմաճին էկաւ տեսաւ զքեզ խիստ զապուն էիր, առաւ տարաւ զամէն քուրդ. ապա մի հոգար, բան մի չի կորիւր, զէրա թղթով դրով է, երբ ողջանաս՝ զարձնէ քեզ զամէնն:

Եւ ես ելեալ շրջէի եղեգնեայ գաւազանին վրայ զողջօջալով եւ առեալ զքուրս ծախէի: Եւ մինչ ի այս տկարութեանս էի ես, ահա ասիին ինձ զիւր թէ շուտ հասիր, Իբիրայլի խոճայ Կիրակոսն այն մեռաւ, որ դուն ամանաթ էիր քովն թողել. եւ զինչ ունէր՝ զամէնն Պէյթաթմաճին առաւ. զոր ես տկար գոլով բոնեցի ջորի եւ հասեալ անդր թէ պէտ առնեմ ապրանացս. կալաւ զիս մալիմէյիթչին եւ 15 եղ ի բանտի, թէ դու նորա օրդախն ես. նորա շատ մալ կայ մօտ քեզ: Զոր լուեալ բարի եւ լաւ մարդկաց՝ մէջ մտան, դրամ տվին, հաղիւ դերձուցին զիս ի ձեռաց բոնաւորաց: Եւ այն հոգսուս կրկնվածք եղայ եւ անկայ ի մեծ 40

9 անցա: — 10 կամեցա: — 16 հիւանդացա: — 24 արաւ: — 27 եղեգնեա: — 33 արաւ: — 40 կրկնվածք եղա:

հիւանդութիւն, առաւել քան զառաջինն. եւ ոչ զեղ, ոչ այլ ինչ օկտէր ինձ, զի յոյժ մեծ տենտ եւ տագնապ ունէի ես մինչեւ հինգ ամիս: Զոր սակաւ մի զօրացեալ՝ աճապարեցի եւ հասայ ի ՊՈՒՐՍԱ, յոյժ արտում եւ տխուր, զի զայլ ինչ այնպէս չհոգայի որպէս զգրեանս: Եւ ասի զողջս ի վերայ տալէհիս.

Քրիստոս տէր իմ արքայ, զհոռութիւն քեզ միշտ յարակայ. Դու իմ տարտիս ճարակ արայ, ամէն չարիս զիս ազատեայ. Ի այս աստնվորիս վրայ ես միայն անյաջող գտայ. Փորձանաց չարի դիպալ, 'Է ի ամէն բարեաց զրկեցայ: Աւաղ թ' ինչ անեմ հիմայ, յայս դարիւղ երկիրս որ անկայ. Ըստիկ 'Է ի փողէ ելայ, եւ մարմնովս յոյժ հիւանդացայ. Հինգ ամիս գլուխ չի կալայ, չոր փայտի նման փրտեցայ. Ստեղծող իմ Աստուած գթայ, այս ցաւէս դու զիս փարատեայ:

Եւ միշտ զայն զմտաւ անէի եւ խորհէի, զի մի ուխտաղանց եղէց, այլ հասից ուխտիս իմոյ: Եւ Պուրսու երեք օրն հասաք ԱՂԱՃ Տէնկիճն, զոր հաղիւ երկու օրն անցաք: Եւ անտի բազում լերամբ, մայրիւք, դաշտիւք եւ դժուար ճանապարհօք հասաք ի ՊՈԼՈՒ. եւ կայր անդ ժե տուն հայի, որն պօյաճի, որն խաֆթանձի. եւ էր քաղաքս ի վերայ բարձրաւանդակ տեղով: Եւ մերձ սորա միլ մի՝ ասին թէ կայ գեղ մի Հայոց, երկու էրէց, բայց չգնացի անդ:

Եւ անտի սակաւ մի զնացեալ տեսաք լեռուն մի, ուստի ջուր բխէր եւ եկեալ ի վայր քար դառնայր, բայց կազուղ էր. ընդ որ հիւանդեալ փառս տվաք Աստուծոյ: Եւ այն օրն հասաք ի ԿԵՐԱՏԱՅ. եւ սա յոյժ մեծ լեռուն էր, բարձր եւ ցրտային. եւ ասին թէ աստ սաստիկ ձմեռ լինի որպէս յԱրգրումն: Եւ անտի հինգ օրն հասաք ի ԹՕՄԻԱՅ խոսապան, ուստի մօխայեր կ'ենին. եւ բոլորն ամէն մուխայերձիք են. բայց չէ նման Աճկուրու, այլ ցած. եւ բազում գաւառաց, նաեւ Լէհու՛ գային վաճառականք. եւ էր յոյժ մրդաւէտ: Անտի երկու օրն հասաք յՕՍՄԱՆՉՈՒՆ.

45 հասա: — 53 գնա: — 59 հիւանդացա: — 60 հինկ: — 61 փրտեցա: — 68 լերանր: — 71 բարձրաւանդաք:

Եւ սա ունէր յոյժ բարձր եւ սիւրբի բերթ յինքնարոյս քարանց, որպէս Բարվան: Եւ անտի մէկ օրն հասաք ի գեղեցիկ քաղաքն Հայոց ՄԱՐՉՈՒԱՆ, մրդաշատ եւ դրախտաւոր. եւ կայր եկեղեցի մի՝ Աստուածածին անուն, բերթին անուն, բերթին մէջն՝ ի վերայ բարձր լերան, յորմէ ամենայն քաղաքն եւ դաշտն երեւէր. կային լաւ եւ իմաստուն քահանայք. եւ աւելի քան զեկերիւր տուն հայի, տեղացի եւ եկամուտ: Եւ սորա առջեւն մեծ գիւղ մի՝ ԿՈՒՄԻՇ. եւ յերաւի Կումիշ, զի ազնիւ, բարակ եւ փայլուն չուլ անտի կ'ենէ, որ այլ աշխարհ չգտանի. եւ մինչ Լէհու անտի գան տանին: Եւ աստի յառաջ ամէնն հայի գեղ ու քաղաք: Եւ կայր գեղ մի ԳՕՐՔ անուն, մերձ քաղաքին, եւ վանք մի գեղեցիկ սուրբ Գէորգ:

ԱՄԱՍԻԱ

Զոր անտի մէկ օրն հասաք ի մայրաքաղաքն ԱՄԱՍԻԱՅ, ուստի էր մեծ զինաւորն թէղորոս եւ Բաթարինէ կոյսն եւ Վասիլիուկոս, այլ եւ քաղամարտիկն սուրբն Գէորգ: Եւ էր սա ի վերայ երկու լերանց. եւ ի մէջ լերանցն երթայր մեծ գետ մի. եւ կայր երեք եկեղեցի Հայոց եւ Բձ տուն հայի՝ Եկաց եւ բնակաց. եւ աւաղերէց մի տէր Գրիգոր՝ յոյժ խրթին, այլ եւ վարպետ ժամասաց. այլ եւ ծերունի եպիսկոպոս մի՝ քաղցրահամ եւ անուշ եղանակաւոր, տէր Վարպետ Ազարիա կաթողիկոսին: Կային ի նմա անուանի մարգրիկ՝ ոսկերիչք եւ պօյախանաճիք: Եւ էր յոյժ մրդաշատ եւ բարելի, եւ անտի ելանէ ազնիւ սերկեւիլն եւ յոլով: Կացի անդ շաբաթ մի. ապա տէր Գրիգորն եւ Պարոտէրն զիս ամէն օր քովերուն չի թողին. մեծ հարկիք ու պատիւ արարին մեղաւորիս:

ԹՕԽԱԹ

Եւ ելեալ անտի երկու օրն հասաք ի ԹՕԽԱԹ: Եւ այս քաղաքս էր լեռնամէջ, յոյժ բարելի եւ մրդաշատ. եւ ջուրն եւ ամենայն ինչ առատ, քանզի շահրիտան է եւ հոչակաւոր քաղաք. ունի պէգէստան, պիթպազար, ոսկեթէնոց, ամէնն քարէ. միզանն եւ խաներ: Եւ կայր ութ եկեղեցի Հայոց եւ ուսած քահանայք եւ գիտուն, համեղաճայն վարպետք. եւ վարդապետ մի Մաղաքիայ տեղացի, եւ Շձ հայի տուն. բայց ասին թէ յառաջ հազար խանայ էր, զոր ձէլալիքն ցրվել են, զորս կորուսել: Ունի եւ արվեստաւորս

98 փարակ:

ազգի ազգի. եւ բոլոր քաղաքով երթայր մեծ
 135 գեա Սաղովան. եւ այս Սաղովաս խիստ բա-
 րելի եւ լաւ երկիր է, երկու կողմանց լեռն է,
 եւ միջով երթայ գետն: Եւ այս լեռանց վրայ
 երկու գիւհաց երեքտակ գեղորայք են՝ հայու,
 հոմի, տաճկի: Եւ կայր վանք մի Հայոց՝
 140 Սուրբ Անտոն եւ առաջնորդն պարոնտէր
 Նդիայ. եւ հուպ քաղաքին վանք մի այլ սուրբ
 Անարծաթ, Քէմէր կ'ասեն, հին եւ աւեր, զոր
 այժմ նորոգել էին: Եւ միւս կողմն քաղաքին
 Կոմանայ, ուր գերեզման է Յոհանու Ոսկերե-
 145 բանի, բայց չկարցայ ես անդ գնալ: Եւ էր
 յայնժամ յոյժ սղութիւն, զի մէկ քիւս դարին
 Ծ դրամ հազիւ գտանէին. եւ ի դառնալս
 աժնութիւն էր խիստ, որ քիւսն հինգ դրամ
 իջաւ. փառք Աստուծոյ:

ՍԵՐԱՍԻԱ

Անտի օրուկէան եկաք ի թագաւորանիստ
 փայլթախան ՍԵՐԱՍԻԱ եւ ԱՐԴՈՍ օվան,
 որ է Ալթուն օվայ: Մեծամեծ եւ սըխ գեղեր
 անաք, բայց ամէնն աւեր. միայն Չիֆլիկն
 5 տասն տուն հայի գաւաք եւ ի Պօլիս. հազար
 աւաղ զայն բարելի մեծ գեղերն եւ ջրալի:
 Եւ Սեւաստ էր մեծ, լայն եւ ընդարձակ,
 մարդաշատ եւ բարօք լի. հացն, միսն, կաթն
 ու մածուն, կարագն առատ. բայց միբզն եւ
 10 գինին նուազ, զի ցրտային եւ ձմեռնային էր:
 Եւ կայր երկու եկեղեցի, մինն՝ Սուրբ Աս-
 տուածածին, միւսն՝ Սուրբ Սարգիս. եւ քա-
 հանայքն ուսեալք, բայց հպարտք եւ գոռոզք.
 եւ ժողովուրդքն յոյժ երկկուգած եւ հեղ: Ասին
 15 թէ Բի խանայ էր, խոկ այժմ Չձ տուն. այլն
 ցիր ու ցան եղել են: Եւ քաղաքիս բոլորն
 մեծ երմախ մի երթայր, որ կոչէր Սղըլ Նըր-
 մախ. եւ այլ գետեր կ'երթայր քաղաքի մի-
 ջովն: Եւ ունէր երկու հիսար եւ ամբոց պա-
 20 տուական. եւ քաղաքէն դուրս Քառասուն
 Մանկանց, տեղն, լիճն եւ բազնիքն. ապա
 ջուրն ցամբել էր: Եւ աւուրն մի ճանապարհ
 փառաւոր եկեղեցի մի վանք՝ Հրեշտակապետ
 անուն, որ ունի իրեք վանք, վարդապետ մի
 25 Մելքիսէթ՝ առաջնորդ¹: Եւ կային շուրջ

143 յայժմ: — 144 կոմանայ: ոսկերեանի:
 2 Մէրաստիայ: — 6 աւախ: բարէլի: — 9 կա-
 րաքն: — 15 յայժմ:

¹ Սա է անշուշտ «Մելքիսէթ եպ. Սերաստացի»,
 որ 1602ին փրկանաւորած եւ նորոգած է իջմ. 1875 նա-
 բեկը: Յիշատակագրութեան մէջ կը կարգամ առդերս
 (թղ. 229բ). «Զի յայժմ ժամանակի... եւ ժամատարաց
 եւ պիւղծ թիւնաւոր մի տոճիկ Ղարայ Աղիծի անուն,
 ի հիւստոսու (ա՛յ յայժմ) կողմանէ եւ եկն ի վերայ Սե-
 փաստիա քաղաքին. եւ տէրն Սեփաստիու բերթին
 Մահմատ փաշան դեռ մանուկ գորով երկեաւ ի նմանէ

Սեւասու բազում անուանի գեղորայք, շէն
 եւ փարթամ. դեղ կայր, որ հազար տուն էր.
 եւ Պինկօրն եւ էնիկէլն իւր դաւառովն ամէնն յ
 ձէլալիք աւերել էին: Մտանէաք ի ներս, մեծ
 տներ կային որպէս խաներ. եւ երկու, իրեք 30
 թօնտիր ամէն տուն, այնպէս մեծ, որ եղ մի
 կու մտնէր մէջն. բայց անբնակ եւ անմարդ
 էր: Եւ քաղքէն դուրս Սուրբ Նշան վանքն² էր
 Սէնիքարիմայ թագաւորին շինած. եւ կայ
 մէջն սուրբ խաչափայտից մասն: 35

ՄԱՒԱԹԻԱ

Ապա անտի վեց օրն հասաք ի ՄԱՒԱ-
 ԹԻԱ. ապա բնաւ շէնք չտեսաք, միայն խա-
 ներ: Եւ էր խան մի գեղեցիկ Կուրծի խան
 կոչեն: Եւ Մարաթիա էր պարսպաւոր եւ
 մրդաշատ. բայց մարդ չկայր, միայն պահա- 40
 պանք. եւ ասին թէ Աղսուս գեղն են, զի ա-
 մէն տարի կ'իծոցն կ'երթան ի գեղն. եւ քա-
 ղաքն մէն կու մնայ որպէս Սիւ: Եւ կայր մեծ
 եկեղեցի մի քարէ՝ Լուսաւորիչ անուն, եւ
 իրեք քահանայ, հարիւր տուն հայ եւ լիու- 45
 թիւն, աժնութիւն առատ. Ս խիարն մէկ
 դրամ. Ե, Զ ձմերուկ մէկ դրամ. Գ հաց մէկ
 դրամ, շորս դրամ օխա մի միս: Կայր եւ գեղն
 եկեղեցի մի եւ Լ տուն հայ: Կայր անդ երկու
 շարաթ վանք քարվանի: Բայց Տաճիկքն նո- 50
 ռա խիստ քաղցր եւ մարդասէրք են եւ բարի,
 ոչ նման այլ Տաճիկաց իժ եւ օձք, զի եւ կ ա-
 ռ ու ը ր անգամ ոչ ասեն մեղ, այլ է ս ա յ ի եւ
 յ ի ս ա կ ու լ ի. եւ յոյժ պատէկին եւ սիրէին
 55 զմեր ազգն:

28 պինկօրն: — 32 մտէր: — 36 մալաթիա:
 — 39 մալթոյ: — 50 տաճիկն:

եւ զօղեցաւ բազում եւ անթիւ հեծելաք ի մէջ բեր-
 զին. եւ ամբայան ինքեանքն եւ մատնեցաւ քաղաքն
 եւ երկիրն մարդով եւ անանով, ընդունք եւ ապրա-
 նաքն ի ձեռն արեանարու գաղանին, որ անխոյ կո-
 սորեաց բազում քրիստոնեայս. եւ զմանկունս նոցա
 զերի տարեալ՝ հանդերձիւք դարգաբէին եւ ի սուրբ
 հաւատոցն մերկ արարին: Եւ բազում աւուրս նոտալ
 յեղր քաղաքին այրեաց եւ աւերեաց գեղեցիկաշէն Բա-
 դաբն եւ գաւառնն, մինչ զի ամայի մնաց Սերաստիայ
 քիւնովն եւ վիճակովն բազում ժամանակս: Բայց գո-
 հանամք զԱստուծոյ, զի յետ սակաւ ժամանակի եղև
 կրկին խաղաղութիւն, որ ցրուեալ եւ ճապարկալ ժո-
 ղովուրդն հաւաքեցաւ ի թվին ՌԾԳ. ապա զմէկ սո-
 մար հացն ի հազար աւթմանի կերաք. փա՛ռք Աստու-
 ծոյ:
² Այս շրջանին Ս. Նշանի առաջնորդն էր Ան-
 դրեաս արքեպիսկոպոս. Մարգիս գրեչ 1615ին կ'օրի-
 նակէ ի խնդրոյ «գրասէր Բաղդասարի» Տաթևացոյ
 Քարոզադիրքը «ի Սերաստիա ի գեղն որ կոչի Դա՛-
 հուսայ» եւ կը խնդրէ յիշել «եւս առաւել զԱնդրէաս
 արքեպիսկոպոսն, որ պահեաց զԿարապետ աշակերտն
 ի քովն ի սուրբ Նշան, կերկրեց ու միթարեց, որ
 մինչեւ աւարտունն զրոյս». Ձեռ. Երեւանի Պետ. Թան-
 վարանի, Թ. 973:

ԽՐԻՍՏԻՆՈՒ

Եւ անտի իրեք օրն եկաք ի ՇԻՐԱՅ որ է
 ԽՐԻՍՏԻՆՈՒ, որ է ի վրայ բարձր լեռան: Եւ
 կայր ի նմա իրեք եկեղեցի Հայոց եւ հա-
 բիւր տուն հայի. եւ Տաճիկք յոյժ չար եւ
 60 վատ եւ խտտախրաք. եւս առաւել Ենկի-
 շարիքն՝ զի նոքա տիրապետել են զքաղաքն
 եւ տներն մեծամեծ շինեալ են որպէս սա-
 րայնի. ամէն մէկ մէկ պարոն մի են. զուլուսն
 շատ. մարդ չիշխել բան մի ասել. վասն որոյ
 65 Հայք սակաւ մնացեալ են: Եւ Սուրբ Յակոբայ
 եկեղեցին խիստ զօրաւոր է, որ եւ Տաճիկք
 յահէն սարսեն եւ հարկիս կ'առնեն եւ նուէրս
 տան վասն սքանչելեացն: Կային եւ Ասորիք
 բազումք ի քաղաքն եւ ի բոլորն դաւառօքն
 70 շրջակայ գեղորէիք: Եւ բերթին հուպ կայր
 մեծ եկեղեցի մի Ասորոց, հին, որ ասին թէ
 սա յառաջ է քան զբերթին: Եւ կայր քաղաքին
 ստջեւն մեծ օվայ, աղնիւ եւ ջրաշատ նման
 Արթօս օվու. եւ այն օվան սաֆի հայու գեղան
 75 մինչ յեփրատ գետն. էին եւ Ասորոց մեծ գե-
 դեր՝ Ալիօս, Ապտուհէր եւ այլ: Եւ կայր իրեք
 անվանի մեծ վանք ի յօվան, մին Սօսորու
 սուրբ Գէորդ, մինն սուրբ Արղմսեհ եւ մինն
 Կարմիր վանք. Արղմսեհ լեռան տակ է եւ
 80 դեռ այն քարն կայ արեւնաթաթախ, որ հայրն
 գեղեցի ի վերայ: Եւ ի Կարմիր վանքն են
 իմաստուն վարդապետք եւ դրագիրք, որոյ
 վկայ են պատմագիրք. եւ մինչեւ ցայսօր անտի
 գրեանք եւ լաւ վարդապետք անտի ելանեն:
 85 Եւ սուրբ Գէորդ՝ Մկրտիչ վարդապետ մի ա-
 ռաջնորդ, աշակերտ Ագարիայ կաթողիկոսի,
 առ որ ես կացեալ էի. սա տեսեալ զիս էառ ի
 վանքն առ իւր:

Էր գեղ մի մեծ ԿԱՍՐԻԿ, որ հազար խա-
 90 նայ էր մէջն. իրեք եկեղեցի քարէ. եւ յոլով
 քահանայք, բայց ժողովուրդ սակաւ, զոր Են-
 կիչէրիքն փայտուցեալ էին: Եւ գեղ մի այլ
 կայր ՊՁՄՇԷՆ, յոյժ բարելի եւ մարդիկ փար-
 թամ. այժմ յայն տանուորաց մին մնացեալ
 95 էր՝ Սուրատ Մարգարէի որդի. սա զփաշան
 երեր պատիւ ի տուն իւր, ամէն հեծելք. եւ
 կերակրեց առանց կրակի. եւ երկրորդ օրն կե-
 րակրեց եփած ուտելով զայնչափ մարդիկ.
 այրեւծիոց դարման եւ գարի նա ինքն միայն
 100 երեւտ:

62 շինելն: — 67 նւէրս: — 73 ջրայլատ: —
 74 յարթօխ: յօվան: — 75 եփրաթ: — 93 բարէլի:
 մարդիք: — 98 մարդիք: — 99 յինքն:

Եւ անդ³ եւս մեծամեծ տներ էին, որ-
 պէս Սեւասու: Անդ տեսաք մէկ տունն քառ-
 սուն օրոցք. եւ ամէնքն հօրն հնազանդ. եւ թէ
 հայրն մեռանէր՝ մեծ եղբորն հնազանդէին.
 եւ այսպէս մեծ սէր եւ միաբանութիւն մեծ 105
 տեսաք երկիրն այն, զոր այլ տեղ երկու եղ-
 բարք կամ երկու քոյրք ոչ կարեն ի միասին
 բնակել ի միում տան: Եւ էին սիրով Հայք ընդ
 Ասորիս. զի աղջիկ տային եւ առնուին. եւ թէ
 ոք Հայոց մեռանէր՝ զԱսորոց երէցն կոչէին 110
 ի թաղուսն եւ Ասորոցն՝ զՀայոց քահանայս.
 եւ ամէնքն հայ լեզու զրուցէին: Կայր ի միջի
 նոցա եւ Հոմի գեղորայք. որ եւ նոքա աղջիկ
 տային եւ առնուին. եւ նոքա մեծ սէր ունին 115
 զուտ խօսին. եւ չես ճանաչել, հայ է թէ հո-
 մոմ եւ ո՛րն ասորի. զի չիք խտիր առ նոսա
 եւ ոչ մի ինչ:

ՀԱՐՍԱԼԱՐՈՒԹԻՒՆՆԻՐ

Եւ կացի առ վարդապետն երկու շաբաթ,
 զոր շատ բարութիւն եցոյց ինձ. եւ խրատ ետ 120
 ինձ, թէ «Սախըն ձիտ հեռ չի տանիս, այլ
 թող աստ առ իս զձիտ եւ փոխէ զհանդերձդ
 եւ հին գձուձ ապա հազիր. զի աստ Քրթաս-
 տան է»: Եւ ես այնպէս արարի, որպէս հրա-
 մայեաց: Եւ այնպէս չար էին Եանչարիքն, 125
 որ քրիստոնէից չի տային ձի հեծնալ, ոչ
 ջորի, ոչ լաւ չուխայ ազանիլ, ոչ այգի, ոչ
 տուն մեծ. այլ զամենայն յախտակէին ի ձե-
 ուաց: Նաեւ առաջնորդաց չտային քննել հաս-
 չհաս կամ օրէնք պահել. զի թէ ոք կամէր կին 130
 առնուլ եւ չհասութք լինէր, չերթային առ
 հովիւ կամ առաջնորդ, այլ (երթային առ)
 Ենչարի մի եւ տային կաշառ, եւ նա զայր իրի-
 ցուն թօփուզով պսակ տայր առնել. եւ նա
 ակամայ պիտէր խօսիցն չեղնէր. ապա թէ ոչ 135
 բազում շարիս անցուցանէր ի գլուխն եւ վնաս
 եւ տուգանք ձգէր զնոսա. այլ եւ եկեղեցեաց
 եւ վանորէից: Եւ թուրքաց աշխարհն ամե-
 նայն այդպէս են, ապա Սարբերթ առաւել քան
 զամենայն: Ի Ստամբուլ սակաւ մի ունին միսի- 140
 թարութիւն քրիստոնեայք եւ վայելչութիւն,
 զի ունին եկեղեցիք պայծառ, տօնախմբու-
 թիւն ձայնիւ. հեծնուն ձի եւ ջորի, ազանին
 եռալէլայ, եթմիչչլայ չուխայ. ուտեն, ըմպեն,
 ուրախ լինին. ունին մեծամեծ տունս, էգիս 145
 եւ դրախտս եւ այլն. զոր յԱնատոլին բնաւ

135 յակամա: — 137 տուքանք: — 144 եթմիչչլայ:
 3 ի Սարբերթ:

դայս ոչ երեւի. այլ տներն ախոռի նման, եւ շարուով, ցած. իսկ ի քաղաքսն քարբիւղով, դռվին փոքր եւ խորափոխ, խաւարչտին: 150 Եւ յայնմ ամի (1613), յորում ես էի թօխաթ, ել հրաման չար, թէ եկեղեցիս եւ վանորայս մի վառեցեն մոմեղէն ճրագ, այլ եղէ. եւ թէ ուրեք դասնէին՝ տուգանէին: Եւ այսպիսի տառապանք եւ նեղութիւն էին ի ձեռս Տաճկաց, վասն որոյ յոյժ աղքատ եւ չքաւոր են, զի միշտ զրկեն, զզվեն, առեղնեն, զրպարտեն եւ առաւել հարկս պահանջեն. եւ թէ տասն սրգի ունիցի ոք, ամէնէն խարած առնուն. եւ թէ հեռանայ, դարձեալ առնուն: Եւ Ստամբուլայ դաւառօք ձի, ջորի հեծնուն. եւ անտի Սեւաստ մինչ յԱմիթ էջ եւ ուղտ. իսկ Սեւըստուն տան էջ ալ տէկմա չէրեւի, ամէնն եղ կու բանեցնեն, աղ եւ բեռն բառնան, այլ եւ հեծնան: Վասն որոյ ես ամէն քաղաք, ամէն տեղ յորով մնաս եւ տուգանք տայի վասն ձիուս, այլ եւ մութ տեղիս, օտանին եւ սրահոց տուն տայի պահել, ամէնին դրամ տայի, որ ուլաք չառնուին. եւ ի ճանապարհին եւս քանիցս անգամ առին ուլախ, զոր տրօք հազիւ կարացի թափել ի ձեռաց նոցա զեղկելի ձիակս. եւ այսպէս ահիւ եւ զողութեամբ շրջէի տարակուսանօք, թէպէտ մեծ քարվանով շրջէի, զի ամէն տեղ հարամիք էին, սօխթանի, ամէն տեղ թալան եւ ետղմայ եւ դուրում. որ ես առաւել քան դամենեսեանսն տառապէի, վշտանայի, քանզի տեղեակ չէի ես այս բաներուս, հիանայի եւ նեղանայի յոյժ. եւ հանապաղ ի սուգ եւ ի տրամութիւն էի անմխիթար:

ԲԱՆՈՒ

Եւ կալայ անդ ասորի մի վարձով, որ զերտէր քրդերէն եւ հայնակ. եւ անցեալ զպատվական ԵՓՐՍՏ գետն իրեք անգամ. մինն քրդու շալիով, միւսովն՝ կէմով. եւ էր ջուրն յոյժ քաղցրահամ եւ սաղ, որ թէ դառ մի ուտես եւ ըմպես՝ մարսես: Եւ անտի օրուկէսն ի ԲԱՆՈՒ խասապան՝ բազում Հայոց զեղօրօք: Եւ էր Բալուն իբրեւ կղզի, զի Եփրատն բորբեալ էր զնայ, սակաւ մի ցամաք մուտ ունի. եւ ունէր սիվրի բարձր անառիկ բերթ մի որպէս Օսմանճուխին. եւ կայր անդ եկեղեցի մի եւ աղօթատեղ Մեսրօք վարդապետին, զոր մտեալ ի ներս՝ աղօթեցաք, մեղայ

152 մոմեղէն ճրագ: — 153 ուրէք: տուգանէին: — 156 տուգանէին: — 161 ուլախ: — 165 տուգանք: — 177 հիանայի: 1 կալա: — 2 քրթէրէն: — 4 քրթու: — 5 ոյժ:

թողութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ննջեցեւոց: Եւ հանդէպ նմին կանգնած վէժ մի կայր, որպէս տապան Հրէից. եւ ի վերայ զիր, զոր ոչ կարացաք ընթեռնուլ. եւ ասին թէ այս նշանադիրքն են, որ յԱստուծոյ տվաւ Հայոց: Եւ էր Լեկեղեցի Հայոց վիմաշէն զեղեցիկ եւ նոր. եւ մին մէջիւ Քրդաց. եւ այն անարդ եւ յարգով ծածկած, պատերն ջաթնէ: Բայց զինին խիստ շատ, զի այդեք յուրք են եւ կաքաւք բազում եւ գէր, իրեք, չորս մէկ փարայ: Կացի անդ շաբաթ մի, եւ այլ մարդ վարձեցի, զի նա (ասորին) դարձաւ ի տուն: 25 Եւ մէկ օրն հասաք ի ՃԱՊԱՂՁՈՒՐՆ լեռնորով, ձորերով եւ անտառօք: Եւ սորայ առջեւով մեծ ջուր կ'երթայր. եւ այլ զետեր սառն եւ անուշ. կայր անդ քանի մն տուն հայ՝ Կամբըլք, առ որս օթեցաք զիշերն, եւ ընդ լուսանալն կէս օրն հասաք ի ՄԱՆՈՒՇԿՈՒՏ, որ էր բերթ ի վերայ բարձր լեռան. եւ ի ստորտն գեղանք Հայոց, զոր նորոգէին: Եւ ասին թէ ձէլալք աւիրել էին եւ ցրվել զՀայերն. այժմ այս քրդու պարոն յոյժ սիրէ զՀայք, վասն որոյ սա ժողովէ. ամէն մէկ իւր տեղն դայ եւ շինութիւն առնեն, ումեքէ չի վախեն:

Եւ անտի սակաւ մի գնացեալ էլաք ի բարձր լեռան մի Պաշի օրերն¹. եւ կայր ի վերայ նորս ձիւն. եւ ի գլուխ լեռանն կայր աղբիւր մի աղնիւ եւ անմամն, զոր ՇԱՔԱՐՈՒ կոչեն. եւ յերաւի շաքար եւ պաղ էր ջուրն, զոր ըմպեցաք կուշտ, քրտնած. եւ ոչ մնասեց մեզ, թէպէտ քրտնած էաք, զի հետեւակ գնացաք: Եւ անտի իջեալ մեծամեծ անտառօք եւ բազում լեռամբք եւ զետերօք անցանէաք. յորս տեսաք վայրի խողեր եւ արջեր: Հասաք ի ԿՈՒՍՈՒՍ գեղն. եւ Քրդերն մեզ կերակուր բերէին, զի այսպէս սահմանք է նոցա, որ ինչ աղք խոնախ դայ նոցա, պիտոր ուտեցնեն. եւ երբ տներուն ելնես՝ յետեւանց հասնին եւ թալանն արպի² պէս: Եւ է աշխարհն այն յոյժ ցրտային որպէս Լէհ. բնաւ եմիշ չի գտվիր, ո'չ խաղող, ո'չ գինի, բայց միայն շողգամ, ևղ, կաթ, մածուն եւ պաղ ջրեր: Եւ Սուրբ Կարապետու ճանապարհն ալ երկու-իրեք տեղ զաֆար կ'առնուն: Կուռուս տեսաւ զիս սուպաշին. հարցաւ թէ «Ուստի՞ է սա». ընկերս

20 քրթաց: — 21 ծածկաց: — 22 կազաւք: — 35 քրթու: — 48 զորս: — 49 քրթին: — 50 բէրէին: — 52 տնէրուն: — 53 ոյժ: — 55 շողգամ:

¹ 1612. սեպտեմբեր 23—29 ըստ Ն. Տ.: ² Արար-բեղուիներու նման:

60 սասց, թէ «Սեւըստու». նա սասց. «Սուա ես. դա Ստամբուլցի է». եւ ամէն կ'ասէին թէ «Սա այս տեղաց մարդկանց չէ. սպա թող տայ տասն դուռուշ», զոր այլոց երկու ուսուպ կ'առնուր. ապա մէկ դուռուշով հաղիւ 65 պրծուցին զիս Հայք: Եւ անտի էլաք ԹՕՁԼՈՒ ՏԱՂՆ. եւ նայ էր յոյժ բարձր, որ միւս կողմն սուրբ Կարապետն էր, կէս առուր ճանապարհ: Եւ ասին թէ յորժամ Տրդատ եւ Լուսաւորիչ անդ էին, 70 Կուարսու մինչ ի Մուշ հեծէլ էր:

ՄՇՈՒ ՍՈՒՎԹԱՆ ՍՈՒՐԻ ԿԱՐԱՊԵՏ

Եւ իբրեւ տեսաք զխուպայքն Մշու սուրթն սուրբ Կարապետու՝ անկաք ի վերայ երեսաց մերոց եւ բազում խնդութեամբ լցեալ գոհացաք զԱստուծոյ, որ արժանի արար զմեզ 75 տեսոյն սուրբ Կարապետին. փա՛ռք Աստուծոյ: Զոր էր մեծ եւ փառաւոր վիմաշէն կամարակալ մեծ եկեղեցի երկու զմպէթով. եւ վերեւն արձիճ որպէս մէջիղնուն վրայ. եւ մտեալ ի ներս տեսաք լայնանիստ բակն պարսպով, բազում խցերով եւ օթեւանօք: Կայր վարդապետ մի ընտիր եւ աստուածահաճոյ՝ Պօղոս անուն, չորս եպիսկոպոս, ժԵ հարեղայ, տնտեսք, սարկաւազք: Եւ մշակքն ամէն քուրդ էին եւ հայերէն ջրի պէս կու խօսէին. եւ ոչ թէ վանքն միայն, այլ եւ ամենայն Մշու օվան եւ դաւառն հայնակ զրուցեն Գուրգերն եւ սուրբ Կարապետի անունն կ'երդնուն:

Փոքր բան տարաք, ժամ առնելով տվաք 90 եւ աղաչեցաք որ մուծին զմեզ ուր տապանն է: Եւ եկեղեցոյ մէջն սիւնքն գեղեցիկ մարմէրէ. եւ կայ աջ կողմն մատուռ մի եւ գերեզման սուրբ Կարապետին. եւ միւսն Աթանազիէն եպիսկոպոսի. զոր երկրպագեալ աղօթեցաք, մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մեր 95 ծնողաց եւ մեր երախտաւորաց: Մեք հասաք մեր մուրատին. Եւ տվին մեզ ճուհար հողուն, որ ի սուրբ գերեզմանէն կ'ելնէ:

Եւ վարդապետն կոչեաց զմեզ ի ճաշ. զի էր երկիւղած եւ աստուածասէր, քաղցր եւ համեղախօս. կերաք կերակուր վանաց եւ արբաք ջուր: Սկսաւ խօսել վարդարպետն եւ ասել. «Ի՞նչ առնեմ, որդեակ, նոր եմ շինել 100 եւ նորոգել վանքս. զի յոյժ աւեր եւ ամայի էր. զի ամէն տարի խզըւպաշն կ'այրէ, կ'ա-

84 քուրթ: — 86 քուրթերն: — 89 պանտարաք: — 104 որդեակք: — 105 յամայի:

ւիրէ. ահա երկու տարի է որ խաղաղ եմք»: Ունէին ժ գօմէշ, ձ ոչխար, ժԵ եղն: Անտի գնացաք մեծ տնտեստունն, տեսաք մեծ թօնտիր մի, որ եղ մի կու մէկնէր. եւ ասին թէ 110 «որձափ աղբ եւ փոշի լինի աստ եւ թօնիրս՝ մեք բնաւ չեմք աւիրել. վաղմիւ կ'ելնեմք աւելած գտանեմք»: Եւ ասին թէ կաղ դեւ մի կայ, որ սուրբ Կարապետն անդ թողել է սպասաւոր վանաց:

Եւ ի ճախ կողմն մատուռ մի այլ տեսաք. եւ ասին. Կին մի իշխանի շինել էր զայս. կամէր 115 մտանել ի ներս եւ շթողութիւն, զի կնօջ հրաման շկար. եւ նա բոնութեամբ եմուտ ի ներս եւ ել սուրբ գերեզմանէն զօրութիւն, զի որպէս այր մի զրեհաւոր եհար գեղարդեամբ եւ սպան զնա. եւ թաղեցաւ աստ: Եւ ի դուրս ելեալ յարեւելից կողմն ընդդէմ դռան էր դուպա մի փոքրիկ որպէս աշտարակ, զոր Յարութիւն կոչեն. եւ մտեալ ի ներս՝ տեսաք 125 սեղան. եւ երկրպագեալ էլաք անտի: Եւ ասին թէ զուպիս ներքեւն դեւք են արգիլած. եւ մեք եղեալ ունին ի գետնի՝ այլ եւ այլ ճայնտ լսեցաք ահարկու: Եւ հուպ նմին Իննակեան աղբերն մերձ միմեանց, աղնիւ եւ գեղեցիկ 130 ջուրք: Եւ էր դուռ մի մեծ քան զայլսն, ուր ասին թէ Լուսաւորիչն մկրտութիւն է արել. եւ իբրեւ ըմպէք՝ շկարցաք իրեք կուժ առնուլ ի սաստիկ սառնութեանէն: Եւ այլ ասաջ տեսաք հաղար եւ աւելի թօնիրս եւ օճախ 135 վանս ուխտաւորաց, որ անդ խորու եւ սլրեան կ'եմեն, զի ամենայն տիեզերաց գան առ նա ի հեռու եւ օտար աշխարհաց՝ Ուռուձէլու եւ Լէհաց ԲՈՒԳՈՒ հոգի կու լինի. եւ ուխտն է վարդապետին օրն:

Եւ եկեղեցոյ ետոյքն տեսաք մեծամեծ վիմաց խաչեր կանգնեցուցած եւ ազգի ազգի արվեստ եւ կապք ի վրայ հանած: Եւ սակաւ մի այլ վայր էր վանք մի այլ, Զորէհանգիստ կոչեն, բայց աւեր է. եւ ասին թէ ջորիքն որ 145 բարձեալ էին զսուրբ մարմինն՝ անդ կանկ առին եւ ոչ կարացին շարժել ի տեղոյն. եւ իբրեւ տարակուսեցան՝ եկն հրեշտակ Տեառն եւ ասէ. Աստ հաճեցաւ Տէր բնակիլ սրբոց. զայն տեղն եկեղեցի շինած էր:

Եւ յաջ կողմն անցեալ եկեղեցուն՝ տեսաք զՍոջուն գերեզմանն, բայց երկու կտոր եղած էր. եւ ասին. Ով քարիս վրայ պառկի, մէջքն չի ցաւի: Բայց վասն գող Քրդոց՝ բարձր պարիսպ քաշած էր:

112 յաւելել: — 113 յաւելած: — 123 ընդէմ: — 128 յունկն: — 154 քրթոց:

Եւ սուրբ Կարապետն մէջ մէջի է եւ լեռնային եւ յոյժ գեղեցիկ տեղ . եւ ի ճանապարհին սափի անթառամ ծաղիկ է եւ եսպանի սմայօլ եւ այլ հոտով ծաղիկնի : Իսկ մորին ամէնն եկմիջ է՝ խնձոր, տանձ եւ սալօռ, ընկուզն շատ : Եւ ազգ մի պտուղ կու լինի՝ կարմիր սպիտակ գունով, փոքր եւ կլոր քան զկերաս՝ մէջխօջ համ ունի, ալօճ կոչն : Եւ զընկղից ծառի ճղերն առջըն կտարել էին վրայ ելաներով, զի բազումք կան յանտառնին եւ յուժ սիրեն զընկուզն :

Եւ սուրբ Կարապետու կ'երեւէր լեռն վանայ եւ Բաղէջ եւ միւս կողմն Եփրատ գետ եւ Մուշ քաղաքն օվայոյն . եւ կայ օվան իրեք անվանի սքանչելագործ մեծ վանքեր . եւ են հուպ եւ մերձ միմիանց իրբեւ կասկարայք . մինն Մատնէվանք, ուր կայ Պետրոս առաքելոյն մատն եւ այլ բազում նշխարք, զոր երեք Սասնցի տանուակերն ի Հոռոմայ եւ շինեաց ի վրայ եկեղեցին եւ կոչեաց Մատնէվանք : Երկրորդն՝ Սուրբ Աղբեր, ուր կայ շիշով պատվական արիւնն Բրիտանոսի, որ ի կողին : Եւ սուրբ Առաքեալն ստորոտ լերինն, ուր կան Բեւեռքն Բրիտանոսի, որ բեւեռեցաւ, այլ եւ Գեղարզն եւ այլ մասն : Եւ այլ ի վայր են խորու մօրիք եւ լերինք, որ են Սասունք :

Եւ իրեք օր կացի անդ, հասի ամենայն փախազանացս : Եւ էր անդ Տէր Մարտիրոս անուն եպիսկոպոս մի եւ վարպետ, յոյժ քաղցրեղանակ . զի յորժամ հանէր զձայնն՝ համեղ նման Մամասայ, ոչ թէ միայն մարդիկ զմայլէին, այլ եւ թռչունք ժողովէին մերձ առ նա : Զսայ յոյժ աղաչէին մնալ յԱմիթ . եւ նա ոչ կամէր, զի ոչ ինդրէր զփառս ի մարդկանէ, այլ առ ի Աստուծոյ :

10. ՎԵՐԱԳԱՐՁ Ի Կ. ՊՈԼԻՍ
ԾՈՎՔ-ԱՐԳՆԻ

Եւ սուրբ տեղեացն եւ բարի աստուածազգեաց կարգաւորացն բազմալի սիրով հրաժարեալ մինչ յարտասուս հարեալ, զարձաք կրկին ի Խարբերթ : Լուաք անդ թէ Մուրատ փաշան անթիւ եւ անհամար հեծելազօրօք զնայ(ր) ի վերայ Շահին եւ հասեալ յԱմիթ՝ մեռաւ¹ : Զոր ես ողջունեալ զՎարդապետն

160 սառլ էի վրայ օ : — 162 կլոր : — 164 գնկղից : — 167 լէոն : — 169 յօվայոյն : — 177 կասկարայք : — 187 մարդիք : — 188 ոյժ :

¹ Փոքրիկ սխալ մը կը գործէ հոս Սիմէոն Ժամանակագրութեան զէմ, երբ կը գրէ թէ «Լուաք անդ թէ Մուրատ փաշան անթիւ եւ անհամար հեծելազօրօք զնայ ի վերայ շահին եւ հասեալ յԱմիթ մեռաւ» : Մուրատ փաշա մեռած էր տարի մը առաջ, 1611 թ. Կոստ. 1611. հմտ. Hammer, 2, էջ 737 : Ուստի պէտք է այնպէս իմանալ որ Սիմէոն ի Խարբերթ Մուրատ փաշայի մահուան մասին եղած խօսակցութիւն մը արձանագրած է իւր յուշատետրին մէջ իբրեւ նոր զէպք մը :

² Մկրտիչ Վ. Խարբերցի :

լոմ², առի զձիս եւ զիմ զգեստս չուեցի զէպ ի յԱմիթ, զոր լերամբք եւ մայրիւք երկու օր ու կէսն հասաք ի ԾՈՎՔ . եւ կայր Ծովուց մէջ զեղ մի Հայոց ի կղզին . եւ քարէ եկեղեցի մի յորում կայր մասն խաչափայտից, որպէս կոչի սուրբ զրոյ՝ Ծովուց սուրբ Նշան, զոր բազում նշան եւ սքանչելիս առնէ մինչեւ ցայսօր, զոր եւ ի գիրս ընթերցեալ եւ լուեալ ի բաղմաց : Եւ կայր ի ցամաքն խան զառ ի կողմն լերինն որ էր մայրի . անդ օթեցաք : Եւ թողեալ ի խանն զինչս եւ զստացուածս եւ զզրատոս, եւ գտեալ նաւակ մի՝ անցաք ի զեղն եւ մտեալ եկեղեցին . դեռ գերեկոյն ժամն կատարէին : Խնդրեցաք եւ ցուցին մեզ զսուրբ Նշանն, որում անկեալ երկրպագեցաք եւ մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ննջեցելոցն :

Եւ անտի մէկ օրն հասաք յԱՐԳՆԻ քաղաքն, որ էր բարձր լեռուն . եւ ի գլուխն եկեղեցի վիմաչէն մեծ զմայթայարկ, որ կոչի Բարձր Աստուածածին . եւ եկեղեցի մի ալ ի լեռան տակն որպէս Վարդայն . եւ զեղ ալ կայր եւ շինլիք : Եւ ասին թէ վերի տաճարն առաքելաչէն է եւ յոյժ սքանչելագործ, զի ամէն կիրակիմտուն լոյս կ'իջնու ի վրայ զմայթիին ակներեւ ամենեցուն : Եւ անտի հասաք կէս օրն լեռ մի վայրի, որ կոչէր ՆԱԼ ԴՐԱՆ . եւ իրաւի, զի սափի քար էր, հող կամ կանաչ չերեւէր . հաղիւ անցաք՝ ո՛չ նալ մնաց, ո՛չ փոսղալ . եւ իմ չըզմիս տապանն անկաւ : Եւ անտի եկաք ի ՏէՎԿԵԿԵԶԻՏՆ, որ էր խորու ջուր, զոր ուղտիւք հաղիւ անցաք . եւ մերձ յԱմիթայ զուտը հայու գեղեր են եւ վանքեր, որն շէն, որն յաւեր : Եւ Ստամպոլայ մինչ յԱմիթ ո՛չ հոռոմ տեսաք, ո՛չ հրեայ . բայց Թօխաթ քանի մն տուն ջճաի, եւ նորս եւս հայնակ խօսէին : Մինչ Սեւաստ սակաւ էր ասորին . եւ անտի յառաջ սափի հայ ու ասորի մինչ Մուսուլ եւ Պաղտատ եւ այլն, որ եւ Ասորեստան անուանի :

ԱՄԻԹ-ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Եւ մերձ եղեալ յԱմիթայ՝ երեւեցաւ ազնիւ եւ պատվական պարիսպն տիգրանաչէն, որ է

8 սղեստ : — 15 ընթերձեալ : — 17 կողմ : — 22 յորում : — 26 լեռն : — 32 կիչնու : — 42 հրեայ : — 47 ասորէստան

⁵ Օգոստ. 1611. հմտ. Hammer, 2, էջ 737 : Ուստի պէտք է այնպէս իմանալ որ Սիմէոն ի Խարբերթ Մուրատ փաշայի մահուան մասին եղած խօսակցութիւն մը արձանագրած է իւր յուշատետրին մէջ իբրեւ նոր զէպք մը :

50 աթոռ եւ թախտ հայրապետացն Հայոց եւ թագաւորաց . եւ այժմ եւս աթոռ հայրապետաց եւ դասասաց վարդապետաց . զի միշտ անպակաս անտի ելանեն ուսումնասէր եւ իմաստուն եպիսկոպոսք, վարդապետք, երաժիշտ վարպետք, ընտիր քահանայք, այլ եւ զպիրք եւ զպրատունք : Եւ մտեալ ի ներս՝ իջայ ի Հասան փաշին խանն, որ մեծ եւ աննաման շէնք ունէր, կոիածու եւ անտաշ վիմօք . ունէր դետնափոր երկու ախոռ մեծ, որ 60 եձ ձի մէկնէր ի մէջն . եւ մէջն ազնիւ հաւուղ . բոլորն երկթէ մուշպախ, ներկած ազգ եւ ազգ զեղովք . ունէր իրեք տակ օտանի, ամէնն քարէ՝ ներքին, միջին եւ վերին . եւ կից նմին ոսկերչնոց խիստ զարմանաչէն, կամարակապ իբր զԿէնճուկն Պուրսու եւ Ալլ փաշան Ատրանու : Ունի եւ լաւ արվեստաւորք, որ զատ Ստամպոլայ այլ տեղ չգտանի, ոսկերիչք, զաննիչանձիք, պիչախիչք, չախուձիք, բարուչիչք, չըմածիք եւ այլք, որ խիստ ամուր եւ լաւ բանին . եւ ինչ փէշաքար ուղես՝ անդ գտանես :

Կայր Հայոց երկու եկեղեցի, մեծ եւ վիմաչէն փառաւոր . մէկն Սուրբ Կիրակոս աւագ եկեղեցի եւ Սուրբ Սարգիս : Ունէր զարպաս եւ եպիսկոպոսարան եւ զպրատուն եւ վարգապետ մի Բարսեղ անուն, որ եւ առաջնորդ, աշակերտ Սրապիոն կաթողիկոսի, այր խրթին եւ բաղմիմաստ : Սա տեսեալ զիս՝ ճանաչեց, զի երբեմն եկեալ էր ի Լէ՛հ նուիրակ սուրբ Էջմիածնայ : Կայր հազար տուն հայի եւ ամէնքն հարուստ եւ փարթամ, պերճ եւ փառաւոր . եւ որչափ ամալ եւ մեծութիւն կայ, ամէնն իրենք զաֆա են արել, թէ զտառապխանան, թէ զկօմբուկն, թէ զխաներն թէ զտառապխանան եւ զայլն ամենայն : Այլ եւ աչիքն, պիրեանձիքն, քէպապձիք, հացծախք, պախղալին, խասապին ամէնքն Հայք են : Եւ երբ կիրակի լինի կամ տօն՝ Հայք խանութ շէն բանալ, շէն բանիլ . նա գիտես թէ ամայի եւ վէրանէ : Աստ եւ ի Սեւաստ տեսայ լաւ հաւատ եւ լաւ քրիստոնէութիւն . թէ՛ ժամ երթալ, թէ՛ տօն պահել, թէ՛ օրէնք քալցընել, թէ՛ հիւրընկալութիւն, թէ՛ կարգաւորաց հարկիք, թէ՛ ժամակարգութիւն, թէ՛ քարոզ, զանձ, տաղտետր եւ մեղեդիք, թէ՛ դաս վարդապետաց եւ զբազիր :

Եւ օր մի զնացի Սուրբ Կիրակոս ի ժամ հինգ տեղ պատարագ էր, զի հինգ խորան ու

95 տաղտետր :

նէր . եւ քսան եւ հինգ էրէց համբեցի զատ վարդապետաց եւ հարեղայից եւ եպիսկոպոսաց : Եւ բարի սահմանք մի այլ անդ տեսայ, զի ով ժամ առնել տայ, նայ Փառք ի բարձունսն յէն յետեւ ժամին տէրն կու զայ հետ իր քահանային եւ սկասնի վարդապետէն բաժնիլ ժամուց մինչեւ ի կղերիկոսս . եւ այնպէս կարգաւ, որ զինչ քահանային տայ, կէսն սարկաւազին . եւ այնոր կէսն կղերիկոսի . նոյնպէս թաղման եւ այլոցն Բ. Բ. Գ. Գ. շահի կամ այլ աւելի փոքրաւորաց տան . եւ յետ կատարման տուն տանին յընթրիս : Բայց յոյժ անուշահամ եւ համեղ ազնիւ կերակուր տան, ամենալի սեղան եւ բաղմակերպ եւ գնով . զոր ոչ Ստամպոլ, ոչ Հալապ, ոչ այլ տեղ չեմ տեսել այնպիսի լի եւ առատ կերակուր, միայն ի Լէ՛հ : Այլ եւ խորտիկք՝ պիրեան, պորակին եւ այլ քաղցրածաշակ եւ բաղմածախ եւ մեծազին : Իսկ զինին Արղընու քաղցր եւ թանձր բայց թէ մին Ֆինճան խմես, բաւ է քեզ . զի թուրքի աշխարհն իրեք զինի յիշուի . մինն Պուրսուխու, մին՝ Անկուրու եւ մին՝ Արղընու :

Եւ տներն զրոսեանց աղտեղի կ'երեւի . բայց յորժամ ներս մտանես, այլ չուզես զնալ անտի . քանզի Հալապ տներն կու նմանին՝ ազնիւ, թալանլու, նաշխուն եւ քօշքերով : Եւ քաղաքացիքն յոյժ բարեկեցիկք եւ պարկեշտ . նաեւ ընթրիս բաղմեալ ոչ արբենան, ոչ շատ խօսին, այլ հեղ եւ հանդարտութեամբ . զի ամէնքն կարգացողք, տօմարագէտք եւ հանճարեղք, զրուցատրութիւն թէ առուտուր, թէ առուլիս՝ ամէն մարդավարութեամբ եւ ամենայն ինչ իմաստութեամբ . եւ զրուցն զբարար եւ ոճիւ բառքն : Այլ եւ ինքեանք պարթեւք, զեղեցկատիպք, ազնաւորք եւ ուժեղք, որպէս ճուղեցիք եւ Լէ՛հ, որ ցանկայ մարդ ի տեսս նոցա : Զի անդ է այժմ Հայոց Աթէնք . զի եւ փոքր տղայք զիտունք եւ հանճարեղք են, հանապաղ ի հարցում եւ ի քննումն են . եւ տղայք քչոց եւ ծնձղայս հարկանեն քաղցր եւ ուշիմ, զոր այլ աշխարհ եւ քահանայք անգամ չգիտեն :

Եւ է քաղաքն բարելի եւ մրգաւէտ . բայց սեխն խիստ լաւ եւ անուշ, մեծ է, զեղին եւ երկայն, մինչ զի խօնթեղէրին փէշքէլ կու տանին . եփեն եւ եղով չորակ անուշ : Այլ եւ սո

101 անտ : — 126 բարեկեցիկք : — 133 յոճիւ : — 140 յուշիմ :

բայ քապապն խիտ համեղ է. Թօխաթուն՝ բաշան, Հալպայ՝ մըխլան, Սարբերթու՝ չախալ հացն. փառք յորինողին Աստուծոյ:

Նստի անդ պէկէրպէկի, որպէս Մըսր. 150 մեծ աթու է Ասորոց պատրիարքին. եւ ունին մեծ աւագ եկեղեցի, որ կոչի Մարիամ. այլ եւ Հայոց աթու է:

ԱՐՆԻՈՐԳԻՔ

Եւ Մէրտինու դռան դուրսն տեսաք կռատուն մի. ասին թէ սա Արեւորդոց աղօթատեղն է, որը յառաջն ամէն կիրակամտից անդ ժողովեալ մինչ յիրկուուն ուտէին, ըմպէին. եւ յորժամ մթնէր՝ լոյս վառէին, սակաւ մի աղօթէին, ապա դճրագն անցուցեալ անամօթ եւ լրբենի դիմօք իբրեւ զանասուն ընդ միմիանս պղծէին, հարք ընդ դասերս, եղբարք ընդ քորս եւ մայրք ընդ որդիս խառնակէին որպէս ի ժամանակս կռապաշտից: Չայս իմացեալ պէկէրպէկի մի, կոչեաց զնոսա, զի անդ է քանն Արեւորդաց, որպէս յԱրդրում բռայք, եւ պատվիրեաց մի երթալ անդ: Եւ ազդեցին թէ սոքա նամաղ չունին. ոչ հայ են, ոչ ջհուտ, ոչ հոռոմ. միայն հայնակ կու գրուցեն: Կոչեաց զնոսա դարձեալ եւ ասէ. Ձի՞նչ հաւատունիք դուք: Եւ նոքա ասին թէ Հայոց: Ասէ ցնոսա. Ապա զնացէք նոցա ժամն, ապա թէ ոչ եկէք ի մեր մէջիմք. կամ սրով անցանեմ զձեզ: Նոքա սկսան աղաղակել եւ կաշառք տվեալ յանձն առին զնալ Հայոց եկեղեցին. ապա թոյլ ետ նոցա. եւ սաստիկ հրաման եհան, թէ ոք չգնայ, մալն թագաւորի, զլուին հատցի: Եւ այն մէջիմքն պէթալ մնաց. վասն որոյ ցիր ու ցան եղան. ոմանք Պարս զնացին, այլք յԱսորիս. եւ կէսք ի Թօխաթ, Մարդուան եւ այլն: Եւ որք մնացին անդ ահէ եւ յերկիւղէ վարձէին զոմն հայ, թէ ինձ համար զնա՛ յեկեղեցի. եւ ոմանք նօպաթով եւ կարգաւ զնային ժամ շարթէ շարթ, եւ զայն ահամայ, որպէս Հրեայքն Հոռոմայ եկեղեցին:

Եւ միւս դուռն գերեզմանատուն էր Հայոց, յորում կային մեծագին եւ մեծ տապանք գրովք, որպէս եւ ի Լէհ. եւ քարինքն ամէն սեւ էր: Իսկ բերթն յոյժ ամուր եւ անառիկ մեծամեծ աշտարակօք եւ վիմօք շինեալ: Եւ ներքեւ պարսպին զնայ մեծ գետն 190 Եփրատէս եւ ընդ միմիանս խառնեալ յԱսոր-

151 յաւագ: — 154 յարեւորդոց: — 164 յարեւորդաց: — 182 զայն: — 183 հրէայք: եկեղեցին: — 187 ամեն:

րեստան հետ Նեղոսի¹ ի Նինիէ եւ ի Պաղտատ զնայ:

Կացի անդ երկու շարթ. եկի դարձեալ հետ Մաղաքիայ վարդապետին² ի Սեւաստ եւ ի Թօխաթ. եւ անտի Ստամպօլ: 195

(Շարունակելի:.) Հրատարակեց Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

ԺՈՎԱՆԿԱՐԻՉ

ԻՐ ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Շարունակութիւն:.)

ԻԱ.

Յ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ՝ ԱՐՈՒՆԵՍԱԳԷՏ

Արուեստագէ՛տը... Ան շատ հեշտ սեփականելու տիրոջ մը չէ իրականին. որքան փառայեղ, նոյնքան պահանջներ կը ծրարէ ան իր գաղափարին մէջ: Տաղանդն իսկ հարկ է ճգնի գոհացում տալու համար արդար Արուեստագէտի կոչման:

Այլազգովսկի օժտուած ըլլալով բացառիկ կարողութեամբ, անխորտակելի կորովով (energie), արուեստագէտի համբաւը ձեռք բերաւ միայն անդու աշխատութեամբ: Իր վրայ հիացողներուն ըսած էր անիկա. «Եթէ Աստուած քիչ մը կարողութիւն տուած է ինձ, զիտցէք որ անդու աշխատութեամբ կրցեր եմ զարգացնել զայն»: Բնութիւնն անոր մէջ թէ՛ Ֆրիդիկան եւ թէ՛ մտաւոր այնքան նախանձելի չնորհներ սիրած էր, որ Գիւորդ Բաչինջաղեանի համեմատ «Նա էլ, Միքէլ-Անժելօյի եւ Տիցիանի նման գերեզման իջաւ, երբ

¹ Պէտք է իմանալ «հետ Տիգրիսի»: ² Մաղաքիա վարդապետ ճշգիւ 1612ին Ամիգ կը գտնուէր. իր յանձնարարութեամբ կ'օրինակէ Յովհաննէս զբէշ Ն. Շնորհաւուրց Մեկնութիւնն Մատթէի. կ'աւարտէ «յամի Ռիթ (1613) թուին ի Համիթ մայրաքաղաքի ի դուռն Ս. Սարգսի զաւարձարին եւ սուրբ Կիւրակոսի... ի վայելս գերազանձ բարունոյն... տէր Մաղաքիա աստուածարան վարդապետին Թօխաթոյ, յիշատակ իւրն եւ ձօրն... Թորոսին եւ մօրն Հունարին եւ եղբորն Լուսպարոնին եւ քվերն Զմբութիւն». Ձեռ. էջմ. 1245, թղ. 269բ. հմմտ. եւ Հանդ. Ամս., 1932, էջ 454: Կը պատմէ Գր. Դարանազցի, թէ 1625ին այցելած է Վենետիկ եւ Հոռոմ (էջ 382)ին եւ 1634ին «ծածկելով զինքն եւ մերկանալով յամենայնէ» առանձնացած է վանայ կղզիներէն միոյն վրայ եւ հոն վախճանած (էջ 291): Իր նկարագրի մասին տես անդ, էջ 363—364:

ամեն ինչ լիովին կատարել էր եւ այլեւս բան չէր մնացել ասելու¹:

Նա տիրացած էր իր դժուար արուեստին, շնորհիւ իր տոկուն, աշխատաւէր բնաւորութեան ու այն հովանաւորութեան, զոր դուռն Ռուսաց զոյգ կայսրներու մօտ:

Դատաստանը եւ համոզումը, զոր կազմեր էր նա տարիներու փորձառութեամբ արուեստի մասին, հետեւեալն է. թողո՛ւնք որ Արուեստագէտն ինքը խօսի.

«Բէշալիզմ — ասում է նա — անպայման հարկաւոր է այնտեղ, ուր պահանջում է պատկերի սիւսեալը. դժուար թէ նկարիչը կարողանայ իր ինքնուրուի գիտելու, տօնավաճառի տեսարանը, բոունցքակոխը կամ ազարակի յետեւի բակը: Բայց ցաւալի է տեսնել, երբ նկարիչը իր իրական գեղեցկութիւնը պրոպայիկ ձեւերի մէջ է դնում, այսինքն, ընտրելով պոէզիայով լի մի սիւսեալ, նկարում է նրան համարեա փողոցային ձեւով:

«Բաֆայէլը Փորնարենայի պրոպայիկ գծերին տալիս էր այն իր իրական մաքրութիւնը, սրբութիւնը եւ աստուածային այն հեղութիւնը, որոնք մինչեւ այժմ հիացնում են «Մագնային» նայողներին: Եւ եթէ տաղանդաւոր նկարիչը մտքում զննելով իջեցնել աստուածային գեղեցկութիւնը մինչեւ մարդը եւ ոչ թէ բարձրացնել մարդկային գեղեցկութիւնը մինչեւ աստուածութիւն, — կը նկարէ փրկչի դէմքը, ընդօրինակելով նրան առաջին պատահած սայլապանի կամ ջրկիրի դէմքից, այն ժամանակ հաղիւ թէ մէկը ճանաչէ այդ պատկերի մէջ Աստուածամարդու դէմքը²:

Հետեւաբար Այլազովսկիի Արուեստի ըմբռնումն ա՛յս է, իր կորիզով. իրապաշտօրէն կարելի է նկարել միայն ի՛նչ որ ինքնին ատակ չէ բարձրացումի. գաղափարական գեղեցկութիւնը ներկայացնել իրապաշտ վրձիտով՝ այդ մեղանչել է արուեստի հասկացողութեան ու ինքնին գեղեցկագիտութեան դէմ: Գաղափարական նկարչութեան արուեստին մէջ իրապաշտական նիւթը կայ, վասն զի մարդկային ստեղծագործութեան հիմք միշտ իրականութիւնը կը մնայ. բայց նկարչի մէջ հարկ է այդ նիւթը գաղափարական դարձնող միտքն ու ճաշակը գործեն, եւ այսպէս ըսելու համար՝ թանձրացեալ իրականութեանէն դուրս բերել երազային, գաղափարային մէկ տե-

¹ Մշակ, 1900, թ. 97: ² Գեղարուեստական Ալբոմ Յ. Կ. Այլազովսկու յիշատակին: Ս. Պետերբուրգ 1903:

սին, որ աշխարհի վրայ թէ՛ եղած է եւ թէ՛ չէ եղած: Ահա՛ թէ ինչո՞ւ Այլազովսկին յաւաջ է բերած Ռաֆայէլի «Մագնան» իբր գաղափարական արուեստի նմոյշ:

Ու ի՛նքն ալ, Այլազովսկին, իբր արուեստագէտ, իբր յղացող ու ստեղծող հանձար, ի՛նքն ալ իր նկարներուն մէջ լայնօրէն ունի երազային, գաղափարային մթնոլորտով տեսարաններ, որոնք մասով մը վերցուած են սոփիայ պատկերներէ: Իր «փոթորիկ»ներուն, իր ծովանփունքներու վիթխարի ցցմունքներուն՝ մէջ՝ նա հաւանաբար իրականութիւնը կը վերարտադրէ, մանաւանդ այնպիսի նկարներու պարագային, որոնք իրական, աշխարհազրական վայրերու անունը կը կրեն, ինչպիսի են, «Թէոդոսիան լուսնեկային», «Գարբին», «Նիակարան», «Արարատը» են: Բայց վարպետ-նկարիչը ստրկօրէն չի՛ սիրեր անոնք պատատի վրայ փոխադրել (իրապաշտութիւն), նա իրականութեան տուեալի վրայ գուրգուրալով՝ անկէ վարպետօրէն կը ստեղծէ նկար մը, որ թէ՛ իրական է, եւ թէ՛ մոգուած շնաչխարհիկ մէկ աշխարհամասէ: Կարող եմ հաստատել, որ իր վրձիների տակ լոյսը օրուան ո՛ր եւ է ժամանակամիջոցին — արեւմազի, արեւմարի, զիշերուան ամբողջ ընթացքին — ա՛յնքան նրբին, ա՛յնքան թափանցիկ ու հարազատ վերարտադրուած է՝ որ իրմէ յառաջուան դարը, եւ նո՛յն իսկ իր դարը չէր մտարեբաժ երբեք: Նոյնքան վարպետ է նա, երբ այդ լուսաւորութիւնը յարաբերութեան մէջ կը դնէ ջուրի հետ, հող չէ թէ հանդա՞րտ է ան, թէ ալիկո՞ծ:

Իր «Նաւը փոթորիկի մէջ», «Իններորդ աւլիքը», «Ծովին յոյզը», «Փոթորիկը կը սաստկանայ» նկարներու մէջ՝ լոյսի եւ ալիքի այնպիսի խաղեր, ցոլացմունքի այն աստիճան պերճութիւն ու հմայք է տուեր որ, անոնց պոնաքարաներն³ իսկ գեո գարմանք կը պատճառեն վարպետ նկարիչներուն (Պիլիկերս եւն):

Արուեստագէտին հորիզոններուն մէջ յաճախ այնպիսի հեռաւորութիւն, խորհրդաւորութիւն մը կայ, որ նայողին աչքը տեսարանի ընդհանրութեան մէջ երկար չէ՛ կարող թափառել, այլ հարկ է ալիքէ ալիք հեռանալ, մինչեւ այն տարմօրէն նշմարուող մթնոլորտը, ուր այլեւս կը հանգչին բոլոր տալա-

³ Ունեմ աչքի առաջ Ալբոմ մը 12 գունապատկերներով, որ 1912ին Թէոդոսիայէն իր հետն էր բերած Հ. Ն. Ակինեան: